ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5

ք. Երևան «15» 05 2020թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կահագն և Սամվել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 210 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1,170,928,402 (մեկ միլիարդ հարյուր յոթանասուն միլիոն ինը հարյուր քսանութ հազար չորս հարյուր երկու) ՀՀ դրամ, որից 195,154,734 (մեկ հարյուր իննսունհինգ միլիոն հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Վահագն և Սամվել» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.	ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 10, 2/4
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011025823	ՀՀ 115004675035
ՀԿՀՀ 02815457	ՀԿՀՀ 01529053
գլխավոր քարտուղար	տնօրեն
Հ. Բատիկյան	Ն.Ալոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« » « » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5 ծածկագրով պայմանագրի

ՀԱՓԱԲԱԺԻՆ 5
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

<<	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Ընդհանուր արժեքը (դրամ)
1	2	3	4	5	6
I	**Հողային աշխատանքներ**				
1	III6բ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	մ³	1390	1 487.0	2 066 930.0
2	Նույնը III8վ գրունտը	մ³	670	1 487.0	996 290.0
3	Նույնը V կարգի գրունտը	մ³	1120	1 487.0	1 665 440.0
4	III6բ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով(0.65մ3), տեղափոխում լիցք 1.0կմ	մ³	2140	1 487.0	3 182 180.0
5	Նույնը III8վ գրունտը	մ³	60	1 487.0	89 220.0
6	Նույնը V կարգի գրունտը	մ³	320	1 487.0	475 840.0
7	III6բ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով(0.65մ3), տեղափոխում լիցք 2.0կմ	մ³	1200	1 487.0	1 784 400.0
8	Նույնը III8վ գրունտը	մ³	1150	1 487.0	1 710 050.0
9	Նույնը V կարգի գրունտը	մ³	7470	1 487.0	11 107 890.0
10	III10դ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով(0.65մ3), տեղափոխում պահուստից 2.0կմ-ից լիցք	մ³	4630	1 487.0	6 884 810.0
11	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ³	22200	1 487.0	33 011 400.0
12	III6բ գրունտի մշակում , բարձում էքսկավատորով(0.65մ3), տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	3190	1 487.0	4 743 530.0
13	Նույնը III8վ գրունտը	մ³	2610	1 487.0	3 881 070.0
14	Նույնը V կարգի գրունտը	մ³	5940	1 487.0	8 832 780.0
15	III6բ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով/0.65մ3/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	350	1 487.0	520 450.0
16	Նույնը III8վ գրունտը	մ³	290	1 487.0	431 230.0
17	Նույնը V կարգի գրունտը	մ³	660	1 487.0	981 420.0
18	Կողային առուների ակոսահանում մեխանիզմով	մ³	7660	1 487.0	11 390 420.0
19	Դարակների իրականացում	մ³	244	1 487.0	362 828.0
			1.Ընդամենը		94 118 178.0
II	**Ճանապարհային պատվածք**				
	I տիպ/նոր պատվածք/				

1	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ²	77851	677.0	52 705 127.0
2	Խճավազային խառնուրդ /C-6/ h=10սմ խիճ 20-40 - 10%-100մ2 -1.24մ³ խիճ 10-20 - 25.5%-100մ2- 3.16մ³ խիճ 5-10 - 23.4%-100մ2- 2.91մ³ ավազ/ջարդած խճից/ -41.1%-100մ2- 5.10մ³	մ²	53829	611.0	32 889 519.0
	Բարձր ծակոտկեն ա/բ h=6սմ	մ²	52723	5734.0	302 313 682.0
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	52723	4982.0	262 665 986.0
	II տիպ/օգտագործվում է գոյություն ունեցող պատվածքը/				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=15սմ, ցեմենտի ավելացումով 1մ²-12կգ	մ²	36817	2090.0	76 947 530.0
2	Բիտումի տարածում 1մ²-0.2լ	մ²	36817	160.0	5 890 720.0
3	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	36817	4982.0	183 422 294.0
			2.Ընդամենը		**916 834 858.0**
III	**Կողնակներ**				
1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 2.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ³	5285	1 128.0	5 961 480.0
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=10սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ²	12744	114.0	1 452 816.0
3	Նույնը h=21սմ շերտի հաստությամբ	մ²	19098	207.0	3 953 286.0
			3.Ընդամենը		**11 367 582.0**
IV	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ³	6.5	5 640.0	36 660.0
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	97.3	31 020.0	3 018 246.0
3	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	99.3	2 867.0	284 693.1
4	Գլխադիրների միաձույլ բետոն B15 /16 հատ/	մ³	4.8	94 000.0	451 200.0
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	727.65	564.0	410 394.6
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	689.7	3 083.0	2 126 345.1
7	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	669	4 982.0	3 332 958.0
			4.Ընդամենը		**9 660 496.8**
V	**Ջրթող խողովակների մաքրում, վերականգնում**				
1	Գոյություն ունեցող տարբեր բացվածքների և տարբեր կառուցվածքների ջրթող խողովակների մաքրում ձեռքով, բարձում, տեղափոխում լցակույտ 5.0կմ/19 հատ/	մ³	298	1 487.0	443 126.0
2	d=1.0մ գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15/11 հատ/	մ³	13.04	94 000.0	1 225 760.0
3	Նույն խողովակների գլխադիրների թևերի իրականացում միաձույլ բետոնով B12.5/9 հատ/	մ³	5.26	75 200.0	395 552.0

4	ՊԿ37+75-ում d=1.0մ ե/բ խողովակի տեղաշարժված օղակի քանդում, նորից տեղադրում/N13 բլոկ/				
ա	Օղակի հիմնատակի միաձույլ բետոն B12.5	մ³	0.45	75 200.0	33 840.0
բ	Ե/բ օղակի վերատեղադրում բլոկ N13	հատ	1	98 155.0	98 155.0
գ	Քսուկային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	3	2 867.0	8 601.0
5	d=1.0մ ե/բ խողովակների վաքերի իրականացում միաձույլ բետոնով B12.5/10 հատ/	մ³	4.75	75 200.0	357 200.0
6	d=1020մմ մետաղական խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15/4 հատ/	մ³	5.84	94 000.0	548 960.0
7	Նույն խողովակների գլխադիրների թևերի իրականացում միաձույլ բետոնով B12.5/ 2 հատ/	մ³	1.17	75 200.0	87 984.0
8	Նույն խողովակների վաքերի /4հատ/ իրականացում միաձույլ բետոնով B12.5 /4հատ/	մ³	2.48	75 200,0	186 496.0
9	d=1500մմ մետաղական ծալքավոր խողովակների գլխադիրների իրականացում միաձույլ բետոնով B15 /4 հատ//	մ³	18.5	94 000.0	1 739 000.0
10	Նույն խողովակների գլխադիրի թևերի կրկնակի սվաղ/ՊԿ62+68/	մ²	8.2	9 400.0	77 080.0
11	Նույն խողովակների վաքերի իրականացում միաձույլ բետոնով B12.5 /6 հատ/	մ³	11.55	75 200.0	868 560.0
12	ՊԿ63+47-ում d=1500մմ մետաղական ծալքավոր խողովակի մուտքի մասում երկարացնել 2գծ,մ-ով/երկու հատ ե/բ օղակ N17 բլոկ/				
ա	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.93	5 640.0	5 245.2
բ	Հիմքի միաձույլ բետոն B12.5	մ³	1.2	75 200,0	90 240.0
գ	Ե/բ օղակների տեղադրում բլոկ N17	հատ	2	98 155.0	196 310.0
դ	Քսուկային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	8.4	2 867.0	24 082.8
ե	Խողովակի սոսնձային ջրամեկուսացում	մ²	2.8	4 700.0	13 160.0
13	ՊԿ78+36 1x1.5մ բացվածքով ե/բ խողովակի մուտքի մոտ կուտակված քարերի մաքրում/մանրացում հիդրոմուրճով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	10	9 130.0	91 300.0
14	ՊԿ43+42-ում 4x3մ բացվածքով ե/բ խողովակի գլխադիրի թևերի կրկնակի սվաղ	մ²	23.65	9 400.0	222 310.0
15	ՊԿ4+45-ում 5x3մ բացվածքով ե/բ խողովակի ելքում քարե լիցքի իրականացում	մ³	24.5	9 130.0	223 685.0
16	Նույն խողովակի ելքի գլխադիրի մոտ վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B15/ 1 հատ/	մ³	15.04	94 000.0	1 413 760.0
17	ՊԿ20+37-ում (6x3)x2մ բացվածքով ե/բ խողովակի ելքում քարե լիցքի իրականացում	մ³	49	9 130.0	447 370.0
18	ՊԿ32+78-ում (6x3)x2մ բացվածքով ե/բ խողովակի ելքում քարե լիցքի իրականացում	մ³	49	9 130.0	447 370.0
19	ՊԿ20+37 և ՊԿ32+78 (6x3)x2մ բացվածքով ե/բ խողովակի ելքի գլխադիրների մոտ վաքի և ատամի իրականացում միաձույլ բետոնից B15/ 2 հատ/	մ³	88	94 000.0	8 272 000.0

			5.Ընդամենը		17 517 147.00
VI	**Ե/բ խողովակներ d=1.0մ /ՊԿ103+03; ՊԿ109+05; ՊԿ115+00/**				
1	V կարգի գրունտի մշակում բարձում, բարձում էքսկավատորով/0.65մ³/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	156	1 487.0	231 972.0
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	78	1 487.0	115 986.0
3	III8վ գրունտի մշակում բարձում, բարձում էքսկավատորով/0.65մ³/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	112	1 487.0	166 544.0
4	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	85	1 487.0	126 395.0
5	Ավազակոպճային շերտ խողովակի տակ h=10սմ	մ³	6.55	5 640.0	36 942.0
6	Հիմքի միաձույլ բետոն B12.5	մ³	27.65	75 200.0	2 079 280.0
7	Ե/բ օղակների տեղադրում բլոկ N13	հատ	45	98 155.0	4 416 975.0
8	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	34.2	94 000.0	3 214 800.0
9	Քսուկային ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	135	2 867.0	387 045.0
10	Խողովակի սոսնձային ջրամեկուսացում	մ²	45	4 700.0	211 500.0
11	Հետադարձ լիցք	մ³	163	1 487.0	242 381.0
			6.Ընդամենը		11 229 820.0
VII	**Մետաղական խողովակներ d=720մմ /ՊԿ16+00; ՊԿ118+89/**				
1	V կարգի գրունտի մշակում բարձում, բարձում էքսկավատորով/0.65մ³/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	9	1 487.0	13 383.0
2	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	16	1 487.0	23 792.0
	III6բ գրունտի մշակում բարձում, բարձում էքսկավատորով/0.65մ³/, տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	37	1 487.0	55 019.0
	Նույնը տեղում կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	8	1 487.0	11 896.0
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	1.72	5 640.0	9 700.8
4	Մետաղական խողովակների տեղադրում d=720մմ; 1գծ.մ=141գ; δ=8մմ	գծ.մ	14.5	123 328.0	1 788 256.0
5	Գլխադիրների միաձույլ բետոն B15	մ³	6.66	94 000.0	626 040.0
6	Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	32.78	2 867.0	93 980.3
7	Հետադարձ լիցք	մ³	24	1 487.0	35 688.0
			7.Ընդամենը		2 657 755.1
VIII	**Ճանապարհի կահավորում**				
	Ճանապարհային նշաններ				
	Նախազգուշացնող	հատ	45	35 720.0	1 607 400.0
	Առավելության	հատ	30	35 720.0	1 071 600.0
	Արգելող	հատ	2	35 720.0	71 440.0
	Հատուկ թելադրանքի	հատ	2	35 720.0	71 440.0
	Տեղեկատվության	հատ	17	112 800.0	1 917 600.0
	Սպասարկման	հատ	2	35 720.0	71 440.0

	Լրացուցիչ տեղեկատու	հատ	8	112 800.0	902 400.0
Բ.	**Արգելափակոցներ**				
	Գոյություն ունեցող ե/բ ազդանշանային սյուների ապատեղակայում	հատ	20	2 444.0	48 880.0
	Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով(սյուների քանակը - 1353հատ, վերջնական տարր -56հատ/560կգ; անկյունագծային կապ 336հատ/1793.4կգ ,պողպատե թիթեղ d =4մմ)	գծ.մ	4632	19 552.0	90 564 864.0
	ավազակոպիճ	մ^3	44	5 640.0	248 160
	C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	1242	5 640.0	7 004 880.0
Գ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ^2**				
	1.1	կմ	6.542	221 840.0	1 451 277.3
	1.5	կմ	2.871	55 460.0	159 225.7
	1.6	կմ	3.06	166 380.0	509 122.8
	1.2.2	կմ	24.946	73 873.0	1 842 835.9
	8.Ընդամենը				**107 542 565.6**
	Ընդհանուրը* (դրամ)				**1 170 928 402**

*Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%:
** Կապալառուն աշխատանքները կատարում է Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հացեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր ընդունող
Հ. Բալասանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վահագն և Սամվել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 10, 2/4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004675035
ՀՎՀՀ 01529053
տնօրեն
Ս.Ալոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 210 օր հետո
1	Հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 110 օր հետո
2	Ճանապարհային պատվածք	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո
3	Կողնակներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 190 օր հետո
4	Ուղիներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 190 օր հետո
5	Խողովակներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
6	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 180 օր հետո

Հավելված N 3
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	45231177/506	Ճանապարհների վերակառուցում	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախապեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան. Կառավարական տուն 3.
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
գլխավոր տնօրեն
Ս.Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վահագն և Սամվել» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 10, 2/4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 115004675035
ՀՎՀՀ 01529053
տնօրեն
Ս.Ալոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 15 » « 05 » 2020թ. կնքված
ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2020/3Շ-5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն